

ԵԶՐԻ ԵՒ ՆԷԵՄԻԻ ՄԵՋ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԱԾ ԳԼԽԱԽՈՐ ԴԵՊՔԵՐԸ

Ք. Ա. 536 ին Արարու իւր թագաւորութեան առաջին տարին գերի Հրէից իրենց հայրենի երկիրը վերագառնալու թող կը տայ, վերագարձենելով միանգամայն Տաճարէն առնուած սրբազան անօթները: Երուսաղէմ՝ հասնելով կ'սկսին երկրպագութիւնը վերահաստատել, Զոհի սեղան մը կը շինեն, տաղաւարաց տօնը կը սօնախմբեն ու երիտասարդաց երգերովը ու ծերունիներուն արտասուօքը՝ որոնք առաջին տաճարին շքեղութիւնը կը յիշէին, տաճարին հիմերը կը գնեն:

Սամարացիք սոյն գործին մասնակցելու փափոք կը յայտնեն, սակայն Հրէից առաջնորդներէն կը մերժուին, որուն վրայ Պարսից թագաւորը կը գրգռեն, որպէս զի տաճարին շինութիւնը արգելէ: Գարեհի թագաւորութեան ատեն իրենց մարգարէներուն քաջալերութենէն շարժեալ սոյն իշխանին մասնաւոր արտօնութեամբը եւ օգնութեամբը տաճարին շինութիւնը կը շարունակեն: Անմիջապէս՝ որ տաճարը կը լմնցնեն, կը սրբգործեն կամ կրնձայեն զայն ու Պասեքը կը կատարեն: Արտաշէս երկայնաձեռնի իշխանութեան ատեն Եզր երկրորդ գաղթականութեամբ Երուսաղէմ կ'երթայ ձեռքը թագաւորական նամակով, ուր իւր բացակայութեան ատեն ընդդէմ Մովսիսեան օրինաց շատ մը խառնակ ամուսնութիւններ տեղի ունեցած տեսնելուն, Եզր խիստ կը վշտանայ, և առ Աստուած զղջման և ապաշխարութեան աղօթք մի մատուցանելով, չարիքը դարմանելու միջոցներ ձեռք կ'առնու:

Նէեմի Շօշ մէջ իւր հայրենեացը

ողջալի վիճակը կը լսէ: Իւր տխրութիւնը թիւնը թագաւորէն կը գնուի, և որ հարցաքննութեամբ պատճառը իմանալով իւր բաժակակրին թող կ'ուտայ Երուսաղէմ երթալով՝ անոր պարիսպները շինելու (Նէեմի Ա. Բ. 4. 1): Հրէայք շինութեան գործը կը սկսին և թէպէտ բազմաթիւ խռնդոտներ կեղծն իրենց դիմաց, սակայն և այնպէս այս գործը կը կատարելագործեն: Ժողովուրդը իրենց աղքատութեանը և հարուստ Հրէից հարստահարութեան և վաշխուռութեանը վրայ կը գանգատեն, որով Նէեմի կը պարտաւորի իւր անշահախնդրութիւնը բացատրել եւ կը քաջալերէ զանոնք իրենց գէշ ընթացքէն դադարել և իւր գրաւական առնուած ստացուածքները անոնց ետ դարձնել: Քաղքին ամուսնութիւնքը լմնալով պահպաններ կը կարգուին և Կառավարութիւնը Նէեմիի եղբօրը Անանիայի պալատի կառավարչին կը տրուի: Եզր ժողովրդեան օրինաց գիրքը կը կարգայ, որուն մէջ իմաստը անոնց այս ժամանակ ընտանի եղած միայն Քաղդէարէն լեզուաւ կը բացատրէ: Տօները և խորութիւնները կը պահուին: Աստուծոյ հետ ունեցած ուխտերնին կը նորոգուի և կը կ'ընդունի: Սակայն գեռ Երուսաղէմի ժողովուրդը բաւական բազմաթիւ չլլալով՝ շինական տեղերէ մարդ ժողովելով կը լեցուի: Քահանայից ու Քահանայապետաց յաջորդութեան մասնաւոր յուցակներ կը դրուի ժողովրդեան, պարիսպները կրնձայուին և այս գիրքերը Արարողական կամ Միսական կանոններով և քանի մը յորդորներով կը վերջանան:

Ի Լարգմանութեանց
Յ. Տաղաձեռն:

